ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE79-22CA-4256-99B1 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/13499/02/25

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ,

ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11.02.2026թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ դատավոր Ս. Երիցյանի նախագահությամբ (այսուհետ նաև՝ Դատարան), քննարկելով ըստ հայցի «Հելիոն» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-63/25» ծածկագրով գնման ընթացակարգն ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետևանք նոր ընթացակարգ հայտարարելուն պարտավորեցնելու պահանջների մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

Հայցվորի ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Պատասխանողի՝ թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-63/25» ծածկագրով գնման ընթացակարգն ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետևանք նոր ընթացակարգ հայտարարելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

Հայցադիմումն էլեկտրոնային համակարգի միջոցով դատարան ներկայացվել է 17.12.2025 թվականին, կազմվել է թիվ ԵԴ2/13499/02/25 քաղաքացիական գործը, որը **մակագրվել է** Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ս. Երիցյանին **17.12.2025 թվականին, ժամը 21:30-ին,** իսկ հասանելի է դարձել **18.12.2025 թվականին**:

Դատարանի 22.12.2025 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Հայցվորի ներկայացուցչի կողմից 26.12.2025 թվականին ներկայացվել է վերաքննիչ բողոք Դատարանի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» 22.12.2025 թվականի որոշման դեմ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.02.2026 թվականի որոշմամբ Դատարանի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» 22.12.2025 թվականի որոշումը վերացվել է և քաղաքացիական գործն ուղարկվել է նույն դատարան՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծելու նպատակով:

Հիմք ընդունելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.02.2026 թվականի որոշումը՝ Դատարանը գտնում է, որ հայցադիմումը պետք է ընդունել վարույթ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի համաձայն՝

1. Դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

1**) դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր**

<u>նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործին մասնակցող անձանցից ստանալ պարզաբանումներ գործի լուծման համար նշանակություն ունեցող վկայակոչված հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ.</u>

2) ներկայացվել է հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն.

3) հայցվորը հրաժարվել է պահանջից:

2. Գործը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդությունը գործին մասնակցող անձը կարող է ներկայացնել մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի լրանալը:

3. Գործը դատական նիստում քննելու մասին դատարանը կայացնում է որոշում հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետը լրանալուց կամ հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն ներկայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

<u>4. Գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն գլխի նորմերը տարածվում են էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով դատարանի և դատավարության մասնակիցների, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ անձանց կողմից իրականացվող գործողությունների վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ սույն գլխի իմաստով՝ Համակարգն օգտագործող անձ է (են) համարվում՝ իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, **<u>գնումների հետ կապված վեճերով վարույթում պատասխանողները</u>**, ներկայացուցիչ հանդիսացող փաստաբանները, սնանկության գործով կառավարիչները, նոտարները և արտոնագրված հաշտարարները՝ **<u>անկախ Համակարգի միջոցով որևէ անգամ որևէ գործողություն կատարած լինելուց կամ չլինելուց</u>**:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բոլոր դատավարական փաստաթղթերը (հայցադիմում, դիմում, բողոք, պատասխան, դիրքորոշում, միջնորդություն և այլն) կազմվում և **<u>ներկայացվում են Համակարգի միջոցով</u>**՝ Համակարգի կողմից տրամադրվող գործիքակազմին և առաջադրվող պահանջներին համապատասխան, **<u>բացառությամբ</u>** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների, որոնք ներկայացվում են միայն նյութական եղանակով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավոր ապացույցները ներկայացվում են դրանք սույն օրենսգրքով նախատեսված դատավարական փաստաթղթերին կցելու և **<u>Համակարգով ուղարկելու միջոցով</u>**:

Վերոգրյալի հաշվի առնմամբ Դատարանը գտնում է, որ պատասխանող «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ից պետք է պահանջել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-63/25» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ընդ որում, ապացույցները

պետք է ներկայացվեն **<u>էլեկտրոնային համակարգի միջոցով</u>** (**<u>բացառությամբ</u>** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):

Դատարանը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Հայցվորի ներկայացուցչի կողմից ներկայացվել է թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-63/25» ծածկագրով **<u>գնման ընթացակարգն</u>** ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետևանք նոր ընթացակարգ հայտարարելուն պարտավորեցնելու պահանջների մասին հայցադիմում, հետևաբար հայցապահանջի նման ձևակերպման պայմաններում հասկանալի չէ, թե «գնման ընթացակարգ» եզրույթն օգտագործելով ի վերջո գնման առարկայի բնութագրերն է վիճարկվում, հրավերի պահանջները, թե երկուսը միասին, միաժամանակ նկատի ունենալով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.02.2026 թվականի որոշմամբ արտահայտած դիրքորոշումը, գտնում է, որ սույն գործով պետք է հրավիրել դատական նիստ ներկայացված հայցապահանջի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար:

Դատարանն այս համատեքստում հարկ է համարում արձանագրել, որ ներկայացված հայցապահանջի վերաբերյալ պարզաբանումներ ստանալուց հետո **<u>միայն</u>** հնարավոր կլինի աներկբա եզրահանգումներ կատարել սույն գործի շրջանակներում ներկայացված հայցադիմումի համար անհրաժեշտ պետական տուրքի չափի վերաբերյալ, հետևաբար Դատարանը հարկ է համարում ընդգծել, որ հայցապահանջի վերաբերյալ պարզաբանումներ ստանալուց հետո հնարավոր է եզրափակիչ դատական ակտով առկա լինի **<u>լրացուցիչ պետական տուրք գանձելու հնարավորություն:</u>**

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ, 124-րդ, 199-րդ և 200-րդ, 234.5-րդ, 234.6-րդ, 234.9-րդ հոդվածներով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «Հելիոն» ՍՊԸ-ի ընդդեմ «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի՝ թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-63/25» ծածկագրով գնման ընթացակարգն ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետևանք նոր ընթացակարգ հայտարարելուն պարտավորեցնելու պահանջների մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:
2. «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ից պահանջել դատարան ներկայացնել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-63/25» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ընդ որում, ապացույցները պետք է ներկայացվեն **<u>էլեկտրոնային համակարգի միջոցով</u>** (**<u>բացառությամբ</u>** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):
3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ **<u>հնգօրյա ժամկետում</u>**:
4. Հրավիրել դատական նիստ՝ **<u>05.03.2026 թվականին, ժամը 11:00-ին</u>** Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Աջափնյակ-2 նստավայրի վարչական շենքում **(հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հալաբյան 41ա, 11-րդ հարկ, դատական նիստերի դահլիճ թիվ**

9):

5. **Սույն գործով առկա է եզրափակիչ դատական ակտով լրացուցիչ պետական տուրք գանձելու հնարավորություն:**

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Digitally signed by YERITSYAN SARGIS 3207830072
Date: 2026.02.11 17:00:39 AMT

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am